

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Տիեզերքն այլևս չի թվում բազմաթիվ առանձին առարկաներից կազմված մի հսկայական մեքենա, այլ ներկայանում է որպես ներդաշնակ, անբաժանելի ամբողջություն, որպես դինամիկ կապերի ցանց, որը ներառում է նաև մարդուն և նրա գիտակցությունը:*

### **Ֆրանկ Կապրա**

Գիտատեխնիկական առաջընթացը ոչ միայն սնուն է քաղաքակրթությունը, այլ նաև լուրջ վտանգներ է առաջացնում մարդու գոյության համար՝ ավերելով նրա կենսական միջավայրը: 20-րդ դարավերջին սկիզբ առած էկոլոգիական շարժման գաղափարախոսության հիման վրա ձևավորվել են «բիոէթիկա», «համակարգչային էթիկա», «առողջապահության էթիկա», «ճարտարագիտական էթիկա», «էկոլոգիական էթիկա», «գլոբալ էթիկա» և էթիկական այլ հասկացություններ:

Էթիկան (լատ.– ethica սովորույթ, բարք, բնույթ) փիլիսոփայական հասկացություն է: Էթիկա գիտության ուսումնասիրության առարկան բարոյականությունն է: Էթիկան՝ բարոյագիտությունը, դիտարկվում է որպես հասարակական գիտակցության մի ձև, մարդու, դասակարգի, հասարակական կամ մասնագիտական խմբի բարոյական վարքագծի չափորոշիչների համակարգ:

Վերը նշված տարբեր էթիկական հասկացությունները սերտորեն առնչվում են միմյանց հետ, ինչպես մի մեծ շղթայի տարբեր օղակներ: Այդ շղթան շատ ավելի ընդգրկում է, քան մենք կարող ենք պատկերացնել: Դա ամբողջ Տիեզերքն է իր հիերարխիաներով, որի մի մասնիկը մարդն է: Այդ իմաստով ճիշտ կլինի խոսել Տիեզերական էթիկայի կամ կոսմոէթիկայի մասին:

Տիեզերքը ավանդական ըմբռնմամբ նյութական աշխարհն է, մատերիայի որակապես տարբեր ձևերի ամբողջականությունը: Տիեզերքը աշխարհն է ամբողջության մեջ՝ ներառյալ Երկիրը, Արեգակնային համակարգը, մեր և մյուս բոլոր գալակտիկաները:

«Տիեզերք» բառը հայերենում կազմված է *տի՝ մեծ և եզերք՝ սահման* (երկիր) բառերից, և ինչպես հայերենի եզերքն է հայերենի բնակավայր իմաստով, այնպես էլ Մեծ եզերքն է մեծ սահման, մեծ երկիր իմաստով: Ռուսերենում նույնպես՝ Вселенная նշանակում է մարդու բնակեցման վայր (место вселения): Այսինքն՝ Տիեզերքը մեր բնակավայրն է, մեր տունն է, որի նկատմամբ պետք է ցուցաբերվի հոգածություն, մաքուր պահելու ձգտում, խնամք և տիրոջ վերաբերմունք:

Մենք բոլորս միասին և մեզանից յուրաքանչյուրը կապված ենք Տիեզերքի հետ, քանի որ նրա մի մասնիկն ենք: Գոյություն ունեն տիեզերական համակեցության էթիկական բնական կանոններ, որոնց չիմացությունը կամ նրանց անտեսումն սպառնում է քաոսով, որը նախ և առաջ սպառնալիք է մարդկության գոյությանը:

Տիեզերքի մասին պատկերացումները ձևավորվել են դեռևս այն ժամանակներում, երբ մարդը ձգտում էր հասկանալ, թե որն է իր տեղն աշխարհում:

Հին Հունաստանում կոսմոսը՝ տիեզերքը, ընդունվում էր որպես կարգուկանոն, ներդաշնակություն՝ ի հակադրումն քաոսին, անկանոնությանը: Կոսմոլոգիան որպես Տիեզերքի մասին գիտություն բացահայտում է աշխարհի կանոնավորությունը և նրա գործունեության օրենքները՝ Տիեզերքը դիտարկելով որպես մի միասնական կապակցված ամբողջություն:

Անտիկ փիլիսոփաներից շատերն աշխարհը դիտում էին իբրև ամբողջություն՝ նրանում առկա երևույթների փոխազդեցության ու կապի մեջ: Նրանք գտնում էին, որ աշխարհը միասնական է, որտեղ չի կարող գոյություն ունենալ իրերի անկախ բազմազանություն: *«Բնության մեջ իրերի միջև չկան դատարկ միջակայքեր, ճեղքեր կամ դատարկություններ, հետևաբար չկան առանձին իրեր»* (Պերմենիդես, 540 թ. մ.թ.ա.): Հին աշխարհի մեծագույն մտածող Արիստոտելը (384-322 թ. մ.թ.ա.) գտնում էր, որ բնության բոլոր պրոցեսները ենթարկված են մի գերագույն նպատակի, ներառված են համաշխարհային ներդաշնակության մեջ: Հետագայում, այս ամենը հաշվի առնելով, Ջորդանո Բրունոն (1548-1600 թթ.) զարգացրել է բնության մեջ առկա միասնականության, կապակցվածության և համընդհանուր շարժման գաղափարը: Իսկ Գալիլեո Գալիլեյը (1564-1642 թթ.) համոզված էր, որ աշխարհն անվերջ է, մատերիան հավերժական է, բնությունը՝ միասնական, իսկ բնության հիմքում ընկած է մեխանիկայի օրենքներին ենթարկվող բացարձակապես անփոփոխ ատոմների խստիվ մեխանիկական պատճառականությունը:

Իսահակ Նյուտոնի (1643-1727թթ.) հայտնաբերած տիեզերական ձգողականության օրենքը ոչ միայն ավարտում դարձրեց Արեգակնային համակարգի վերաբերյալ եղած արևակենտրոն (հելիոցենտրիկ) պատկերացումը, այլև հող նախապատրաստեց ամբողջ տիեզերքում տեղի ունեցող մեծ թվով պրոցեսների, այդ թվում և ֆիզիկական ու քիմիական պրոցեսների բացատրության համար՝ դառնալով աշխարհի միասնական ֆիզիկական պատկերացման հիմքը:

Հետագայում անցյալի մեծ մտածողների այդ մոտեցումը մոռացվեց. գիտնականներն աշխարհը «մաս-մաս» արեցին, նրա ուսումնասիրությունը ևս մասնատեցին հանձնելով տարբեր գիտությունների դասին՝ հաճախ մոռանալով դրանց փոխկապակցվածությունը: Գիշտ այնպես, ինչպես տարբեր մասնագետ բժիշկներ հիվանդին հետազոտում են և ի մի են բերում արդյունքները, պարզվում է, որ մարդը չկա, կա միայն տարբեր մասերից կազմված մի մարմին: Դրա հետևանքով խախտվել է բժշկության հիմնարար սկզբունքը, այն է՝ պետք է բուժել ոչ թե հիվանդությունը և նույնիսկ ոչ թե հիվանդին, այլ՝ մարդուն:

1949 թվականին ավստրիացի կենսաբան Լ. Բերտալանֆին (1901-1972 թթ.) առաջարկեց տարբեր համակարգեր ուսումնասիրելիս կիրառել նոր՝ «համակարգային մոտեցում»: Նա ձևակերպեց համակարգերի ընդհանուր տեսությունը, որի համաձայն՝ գոյություն ունի սկզբունքային անհամատեղելիություն ամբողջ համակարգի հատկանիշների և նրա մասը կազմող բաղադրիչների հատկությունների գումարի միջև: Հենց այդ մոտեցումով էլ պրոֆեսոր Վ. Լ. Օբուխովը պնդում է. *«Այժմ, որքան էլ դա պարադոքսալ է հնչում, եկել է ժամանակը, երբ գիտնականներին անհրաժեշտ է բարձրանալ մինչև հնում ապրած մարդու աշխարհընկալումն ու աշխարհազգացողությունը, որը ոչ մի գիտություն չէր ճանաչում և աշխարհն ընդունում էր իր ամբողջության մեջ»:*

Փիլիսոփայության տեսանկյունից՝ աշխարհում առարկաներն ու երևույթները գտնվում են համընդհանուր կապի մեջ, որն արտահայտում է բոլոր տարրերի հատկությունների ներքին կառուցվածքային միասնությունը յուրաքանչյուր ամբողջական համակարգում, ինչպես նաև տվյալ համակարգի անընդհատ կապերն ու հարաբերությունները նրան շրջապատող ուրիշ համակարգերի ու երևույթների հետ: Իրերի և երևույթների համընդհանուր կապն ունի անսահմանորեն բազմազան դրսևորումներ: Դրանք կարող են լինել անմիջական ու անուղղակի, մշտական ու ժամանակավոր,

էական և ոչ էական, պատահական և անհրաժեշտ, ֆունկցիոնալ և այլն: Ֆունկցիոնալ կապերի պարագայում երևույթների միջև գոյություն ունի փոխադարձ կայուն կապ, որի դեպքում մի երևույթի փոփոխությունն առաջ է բերում մյուս երևույթի միանգամայն որոշակի փոփոխություն: «... Ամեն մի ֆունկցիոնալ կապվածություն ենթադրում է, որ դրան ենթարկվող երևույթները բնութագրվում են որոշակի հաստատունների չափանիշներով, որոշակի պայմաններով և օրենքներով, որոնք գոյություն ունեն օբյեկտիվորեն, անկախ մարդկանց գիտակցությունից՝ որպես իրերի հատկությունների միջև եղած անհրաժեշտ հարաբերությունների արտահայտություն»<sup>1</sup>:

Այս միասնական փոխկապակցված համակարգում ո՞րն է մարդու տեղն ու դերը: Այս հարցը հուզել է բոլոր ժամանակների մտածողներին: Պեռևս հնում աշխարհի միասնականության գաղափարի լույսի ներքո զարգանում էր Տիեզերքի՝ մակրոկոսմոսի և Մարդու՝ միկրոկոսմոսի նմանության հայեցակարգը: Պլատոնը (428-347թթ. մ.թ.ա.) իր ստեղծագործություններից մեկում շարադրում է առաջնային չորս տարերքներից (կրակ, հող, ջուր, օդ) մակրոկոսմոսի (Տիեզերքի) առաջացման ընդհանուր սկզբունքները, նշելով նմանատիպ օրինաչափություններ միկրոկոսմոսի (մարդու) զարգացման համար, և բերում տվյալներ անատոմիայից ու ֆիզիոլոգիայից:

Արևելքի մեծ գիտնական, հանրագիտակ Աբու Ռաիսան Բերունին հազար տարի առաջ պնդում էր, որ «մարդու մարմինն աշխարհի նման է»: Յետագայում այդ գաղափարը զարգացրեցին շատ նշանավոր մտածողներ:

Իր «Մակրոկոսմ և միկրոկոսմ» աշխատությունում Պ. Ա. Ֆլորենսկին<sup>2</sup> (1882-1943 թթ.) գրել է. «Տարբեր ուղիներով միտքը հանգում է աշխարհի և մարդու իդեալական նմանության համոզմանը, փոխպայմանավորվածությանը, նրանց փոխներթափանցվածությանը և նրանց էական կապվածությանը: ... Մեզ շրջապատող ամեն ինչ մարմին է, մեր մարմնի շարունակությունը, մեր լրացուցիչ օրգանների անբողջությունը ...»: Ըստ Ֆլորենսկու՝ Տիեզերքն անշունչ առարկաների հավաքածու չէ, այլ կյանքի և գեղեցկության Աստվածաստեղծ տաճար: Նրա համար գոյություն չունի «մարդ և աշխարհ» տարանջատումը: Ըստ նրա՝ «մարդը աշխարհի կրճատ կոնսպեկտն է»:

Անցյալ դարի խոշոր գիտնական Վ. Ի. Վերնադսկու (1863-1945թթ.) բոլոր աշխատությունները տոգորված են երկրի, Մարդու և Տիեզերքի միասնականության գաղափարով: Լինելով Տիեզերքի մի մասնիկը՝ մարդն այսօր դեռևս չի տեսնում իր միասնականությունը շրջապատող աշխարհի հետ: Սակայն բնության երևույթների ամենօրյա դիտարկումներում և մարդկային էության հետ դրանց համադրություններում պետք է փնտրել աշխարհաստեղծման գաղտնիքների բանալին և հետևաբար՝ կյանքի շատ առեղծվածների լուծումը: Ինչպես գրում է Յերակլիտը, «բնությունը ... սիրում է թաքնվել»: Դա նշանակում է, որ բնության իմացության խնդիրների պատասխանն ակներև չէ, և մեծ ջանքեր են հարկավոր իրերի բնույթը հասկանալու համար:

Սակայն իրական իմացության խնդրի լուծումը կախված չէ կուտակված գիտելիքների քանակից, այլ այն բանից, թե այդ գիտելիքները որքանով են օգտակար այս կամ այն գլոբալ խնդիրը լուծելու համար: Մեր օրերում մարդկության առջև ծառայած էկոլոգիական մարտահրավերներին դիմակայելու համար մասնագիտական հմտություններից բացի անհրաժեշտ են խնդրի լուծման նոր մոտեցումներ էթիկայի, բնության էթիկայի կամ ավելի ճիշտ Տիեզերքի էթիկայի դիրքերից: Արտաքին միջավայրի հետ հարաբերվելիս մարդու կենսական գործընթացների կարգավորման և կանոնակարգման համար անհրաժեշտ է աշխարհընկալման նոր հայեցակետ, որը մեր շրջապատող միջավայրը, Երկրագունդը և Տիեզերքը ընդհանրապես կընդունի որպես մեկ

<sup>1</sup> Փիլիսոփայական բառարան, Երևան, «Յայաստան», 1975, էջ 450:

<sup>2</sup> Ֆլորենսկի Պ. Ա. (1882-1943) - ռուս գիտնական, փիլիսոփա: Ձբաղվել է մաթեմատիկայով, ֆիզիկայով:

ամբողջական օրգանիզմ, ֆունկցիոնալ միասնական համակարգ, իսկ մարդուն և մարդկությանը կդիտարկի որպես այդ համակարգի մի կարևոր օղակ, որի գործունեությունից է կախված այդ համակարգի բնականոն գոյությունը:

«Տիեզերքը կենդանի օրգանիզմ է» մոտեցումը կօգնի մարդկանց Մարդ – Տիեզերք, Մարդ – Բնություն, Մարդ – Մարդ հարաբերություններում առողջ մտածելակերպ սերմանելու, էկոլոգիական առողջ հոգեբանություն ձևավորելու խնդրում, որը չափազանց կարևոր է էկոլոգիական ներկայիս ճգնաժամը հաղթահարելու, էկոլոգիական վերահաս աղետները կանխելու և շրջակա միջավայրի հետ ի վերուստ տրված մեր երբեմնի ներդաշնակ հարաբերությունները վերականգնելու համար:



Բովանդակություն